

(Տե՛ս Ordre des offices de la Semaine Sainte à Jérusalem du IVe au Xe siècle. P. J.-B. Thibaut):

3. Դեպքեր՝ որ տեղի ունեցած են Ս. Փրկչի վանքին մէջ, յիշատակարանաց համաձայն .

Ինչպէս տեսանք նախընթաց հատուածներուն մէջ Ս. Փրկչի վանքը շատ հին է, և կառուցուած է Կոյիափայի տան տեղւոյն վրայ, Արաբացիք կը կոչեն այս վանքը Հապս ել-Մեւիհ, վասն զի, ինչպէս յիշեցինք, հոն կը գտնուի Քրիստոսի Երկրորդ Բանսուր: Ան շինուած է քաղաքին պարսպէն դուրս: Անաստաս վարդապետն ալ կը յիշէ զայն իր Վանօրէից Ցուցակին ներածական մասին մէջ, իբր արքունական ծախքով շինուած:

Նկատի առնելով դարերու ընթացքին նոյն վանքին վրայ կատարուած յարձակումները այլ և այլ կողմերէ և ենթարկուած աղեկաւոր տեսարաններու, ինչպէս կը վկայեն յիշատակարանք, արդարև հրաշք մը պէտք է համարել անոր մինչև այսօր կանգուն մնալը: 1353 թուականին (ՀԻՃ. 1 Շապան 755) Հէօճէթէ մը կը հասկցուի որ Վասիլ եպիսկոպոսի օրով, փոխանորդ Գաբրիէլ վարդապետը՝ տեսնելով որ Ս. Փրկչի վանքը ամբոխին յարձակումներուն հետեանքով քանդուած էր, ուզեց վերաշինել, բայց արգելքի հանդիպեցաւ: Հայերը վանքին նորոգութեան համար Մելիք Մանսուր Հիւսսամէտտին Սալահիէն հրովարտակ ըստացած էին, բայց հակառակորդներուն բողոքին վրայ սուլթանը քննիչներ զրկած էր Երուսաղէմ. և անոնց աննպաստ տեղեկութեան վրայ, սուլթանը հրամայեց քանդել վանքը և թողուլ իր առաջին աւերակ վիճակին մէջ. դատուորը կոչելով Գաբրիէլ վրդ.ը պատուիրեց անոր բոլորովին քանդելու վանքը. ան չի քանդեց և ցոյց տուաւ Մելիք Սալիհ Իսմայէլի շինութեան հրովարտակը. բայց դատուորը բողոքագրով մը տասն անձեր կը զրկէ Եգիպտոս, որուն վրայ սուլթանը դարձեալ հրովարտակով մը կը հրամայէ կործանել վանքը և վերածել իր առաջուան վիճակին: Նոյն հրովարտակին վրայ ամբոխը բազմութեամբ կը գիմէ և ի հիմանէ կը քանդէ վանքը:

Ս. Յակոբայ մատենադարանին թ. 540 ձեռագրին յիշատակարանին համաձայն, 1355ին կը վերաշինուի վանքը. անա յիշատակարանը.